

ազգին օգնել ուզող խորհրդան անձինք , որ կողմէն ալ որ ըլլան , սովորութեանց նախապաշարմունքը մտքերնէն դուրս ընելով յառաջ անցնին , մէկտեղ գան . իրենք ազգին առաջաւորներն ըլլալով , ազգին գլխաւոր անդամներն են , անդամները պէտք է զիրար հոգան , ևս առաւել գլխաւորներուն կ'իյնայ այս հոգը : Այսին հարցընել , տեղեկանալ , իրարու միտք հասկընալ . ատելութեան , բաժանմունք պատճառող կարծիքները , ինչպէս որ ամէն մարդ իր վրայ չունի , իրարու վրայ ալ ունենալէն դադրին : Եւ ասոնց առջի գործքերնին ըլլայ ցուցակի վրայ առնուլ այն ամէն անձանց անունները՝ որ կարող են ազգին ընդհանրութեանը խօսք հասկըցընել և իրենք ալ խօսք հասկընալ : Եւ որպէս զի ամենեւին մէջ չմտնեն նախապաշարեալ , սնոտի , սովորութեան ծուռ կարծիքներ , և չպղտորեն խորհուրդներուն ուղղադատութիւնը , որովհետեւ այս ընտրեալ անձինք պիտի ըլլան ընդհանուր ազգին աչք , միտք և բերան , այս ընտրութեան թուոյն մէջէն դուրս թողուն . և հաւատքնին ծալած անձինքը . Բ . Օ անոնք՝ որ ինչուան հիմա սաստիկ կրքով կարծիք մը պաշտպանելու հետ եղեր են . Գ . Օ անոնք՝ որ կարծիքնին փոխելու ատեն իրենց շահէն կորուստ ընելու վտանդի մէջ են . Դ . Օ անոնք՝ որ մտքերնին դրած են թէ կարծիքնին փոխելով իրենց պատուէն պիտի իյնան . Ե . Օ անոնք՝ որ ազգին մէջէն մէկ տեսակ անձանց դէմ բնական իբրեւ անյաղթելի ատելութիւն մը ունին : Արովհետեւ այս առիթներու մէջ գտնուող անձինք թէ և ուղղախոհ ըլլան , և սրտանց ուզեն , չեն կրնար իրենց ուղիղ դատմունքը գործածել առանց նախապաշարմունք մը մէջը խառնելու , որով և շիտից պատճառ կ'ըլլան : Եւ թէ այսպիսի ուղղութեան սիրով , և այսպիսի զգոյշ ընտրութեամբ սկսին ազգին առաջաւորները միաբանիլ ազգին ընդհանուր օգուտը մտածելու , տարակոյս չկայ՝ որ կը յաղթանակեն , կը պսակուի գործքերնին . և այն սովորու-

թիւնը որ ինչուան հիմա ամենուն մըտայ մէջ ծածկուած՝ երկպառակութիւն ձգելով՝ ազգին փնասելու հետ էր , կը խայտառակի , և ուղղութիւնը կը տիրէ ու զազգը կը կապէ 'ի մի սիրտ և 'ի մի հոգի : Եւ այս միթէ այս միջոցիս չխլաւիր հնացեալ սովորութիւնը ձայնը բարձրացընելով՝ որ ինքն իշխող ըլլայ իր երկպառակ , տարաձայն արբանեակներով . այո . բայց ազգին միութիւնը կարգաւորողներուն քաջութիւնը այն պիտի ըլլայ՝ որ տարաձայն կարծիքները վերցընելէն ետքը՝ հաստատուն օրէնքով այն պիտի ինքնագլուխ գոյմունքները լռեցընեն , և բնական օրինաց հիման վրայ քաղաքական օրէնք մը սահմանեն :

Հ . Գ . Մ

Մահ գոչակեալ ի պառաւանց :

Ս'անուկ եղէ ես երբեմն
Իմ մօր միայն ընծայեալ .
Երբ այծեղջիւր ի տուն էջ՝ .
Ձենեց մայր զիս Ա աղէնակ :
Պառաւք գուշակ լինէին ,
Թէ չար աստղի եմ անկած .
Տառապելութիւն , կեանք մաշուն ,
Ինձ մահ հասնի կարճաւրաց :
Ս'այր իմ անգութ զիս ճօշեց՝
Օ ի չար աւուրց եմ դիպել .
Արդի չարբաղդ , ասէր , դու
Իմ օրերուն սեւ կապել :
Եւ մի սեւուկ ինձ մայր ած ,
Օրկեց ի յիւր ըստենեց .
Նախատ , գանկոծ զիս արօր ,
Բզէր գլխոյ իմ ճողեց :
Համբոյր մի մօր ինձ չերետ ,
Եւ ոչ ժրպիտ մի գորվոյ .
Վերգուր ածեց լակոտին ,
Եւրեցք եղեւ իմ հոգոյ :
Արպէս երեխ բողորդի
Օ իս յերեսաց իւր ընկեց ,
Հայ և ջրիկ մուրացոյց .
Վաղցրիկ օրերս ծրւատեց :

1 Յաստեղատուն : 3 Նեղել . զգուշ :
2 Կարճաւուրց :

Իւր երեսաց առաջէն
Օ ինչ անիծեալ քայլէի .
Պատուէր առի յինք չհայել,
Որ մի չարի դիպեցի :

Հիւծին անձամբ գելանեալ
Սահու քրտամբ տապէի
Հեռի կային մերձաւորք ,
Օ Աստուած երկնից կոչէի .
Դիմացըս գեղ հատաւ շուտ ,
Ըրթանցըս թերթ չորացաւ ,
Եւ իմ սորեալ մաշեցին ,
Իրեւ հոգոյս իմ շիջաւ :

Վարունք անցին յետ յետոյ ,
() ր մի չտեսի սրբոհեշտի .
Պառաւք ցընցոտ¹ կապեցին² ,
() ր յոր մահու մընայի :

Օ աւուրց իմոց ժամանակ
Ձեւեն կըտրեն զինչ խիլայ ,
Ուրբաթ է օր լուսնանոր ,
Իսեն , մահով չորանայ :

Երջան մահուս հաստատեն ,
Եթէ շունի քուճն³ ոռնայ .
Սարճինակ⁴ էտ ձայն տըխուր ,
Օ օրերն , ասեն , կըտրեց նա :

Ի գուա կանչեց . յերդիցէն ,
Կըրակ թըռաւ ի թոնրէն ,
Ղըկոյթ ճակեց⁵ յանկարծէն .
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Ի կանջ գոչեց պառաւին ,
Փռնգաց ուղեղ խելառին ,
Սղըրսաց⁶ ոսկերք սընարին ,
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Ղատուկ պառաւն հեծկրտեց ,
Ղեղճ⁷ երեսին ճանճ դըպեց ,
Կատուն գբաղրան⁸ իւր լակեց ,
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Ի չից առջէն դըկուր⁹ անց ,
Ղրագէն բուսեց նոր խաւարծ¹⁰ ,

Տէր պապն հողթափ իւր շըրջեաց ,
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Եղեկատի թեւն հատաւ ,
Կիճիճ յունկաց իւր պըրծաւ ,
Հիզան¹ տանեաց մեր ընկաւ ,
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Եղջիւր լուսնի կախ շըրջեց ,
Եղեղն յամպոց ի վայր էջ ,
Ի հիւսիսոյ հուր վազեց ,
Եւ յսք իմ մահուն էր նըշան :

Ուրբաթ ցերեկ մար հաւին
Պառաւքն ամէն սպասէին ,
Չայն ած խօսնակ հեշտալին ,
Ինձ օր բարի աւետեաց :

Եւ յն օր ի յետ դափ տըւի² ,
Սաշեալ հոգոյս կեանք առի ,
Եւ սըրտնեղանք պառաւի ,
Եւ ուկանք³ իմ մօր որդետեաց :

Սանուկ տիօք պատանիք
Եւ որ աշխարհի վառ ծաղիկք ,
Պառաւնք բանէ պատրաստ լիք ,
Եւ նշուշտ հասնի ձեզ գարուն :

Եւ դա մըտօք նանրհաւատ ,
Սըրտիւք յարժամ են ժըլատ ,
Սիրեն գուժեւ արկած վատ ,
Իարեաց գուշակ ոչ երբէք :

Եւ ի թէ են չանրակնիք ,
Եւ սակաւ մի չարկաւիք ,
Եւ զուրջ տեսնեն տխրագինք ,
Եւ մէն րանգի⁴ խառնեն սեւ :

Եւ որ աշխարհի նոր զարգանք
Եւ որ սըրտին է հերձանք .
Սարգիկ տեսի բազմազանք .
Պառաւք ամէն մի ցեղ են :

Սանուկ տիօք պատանիք
Եւ որ աշխարհի վառ ծաղիկք ,
Պառաւնք բանէ պատրաստ լիք ,
Եւ դա խօսին շաղկրատանք :

Սեր կենաց քաղցր արարիչ
Եւրբ մեզ ի կամս իւր եստեղծ ,
Պառաւնք բընաւ ոչ հարցեց .
Եւ նժամ երես եւ առնու :

1 Հեծան , գերտն : 3 Սմբանք , սմբիլ :
2 Դոփեւ : 4 Երանգ , Երենի :

1 Գուրջ : 6 Սարսուիլ :
2 Զնցոտ կապել , 7 Թաց , լըրճուկ :
պակաս բռնել : 8 Քաղրան , պնակ , տաշտ :
3 Լակոտ : 9 Ստուեր , խօշ :
4 Վարուժանակ : 10 Ծիւլ . խոյլ
5 Ճաթիլ :

Կամք Բստուծոյ են անհաւք ,
 Յաղթարս իսկի չեն գրած .
 Պառլանց գրլուխ խոնարհին ,
 Յոռքէ յաստեղք չըձրկտին :
 Թաւաւոր հոգի այս մարդոյ
 Կերպ է վեհին Բստուծոյ ,
 Թլուչի գընայ երբ պիտոյ ,
 Բռանց քածի ոռնալոյ :

Ձեր տէր պապու հողթափեր
 Ելից հոգոյն չըհրաւեր .
 Տուք Բստուծոյ անվեհեր ,
 Յորժամ նրմա ախորժէ :
 Եւ ես հիմիկ յիսնամէ
 Հեռի պառլանց գուշակէ .
 Հազար կըճիճ կոտրեցաւ ,
 Եւ իմ կարճ կեանք երկընցաւ :

ԵՍ

ՎԱՂԵՆԱԿ

քա ն ա ս ի ր ա կ ա ն

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ա Ր Ո Ւ Ն

Որ ի սուգդ էք՝ դուն մի բացէք զաչս ի հըրճուանս ,
 Թէ ձեր հոգւոց չիք քան ըզմութ այլ տեսարան .
 Բացէք ըզսիրտդ ի սըրբագոյն արդ ի սփոփանս .
 Բնութիւն ճարտարն է ի սփոփչաց՝ թէ ուռչ՝ միայն :

Որ ի բախտի վայելս գըրգեալ եւ յափրացայք՝
 Ի հնարակերտ զուարճմունս՝ լըցեալ զբնութեան թերի ,
 Բացէք ըզսիրտ , տեսէք ո՞ր այն հեշտք առօրեայք
 Ի կշիռ գայցեն՝ դ՛որս արդ գարուն բաշխէն ձրրի :

Որ ի մահիճս անդ տանջեցայք տառապանաց ,
 Եւ զցաւսդ հանէք վկայս՝ զի ցաւոց է այս երկիր ,
 Բացէք նուաղեալ զաչսդ ի տեսիլ յայս կենսազգեաց ,
 Եւ հաս Վարուն , Վարուն բաշխող կեանս բըռնալիր :

Բռփւոյն նըշոյք լուսավարդ
 Ի քաղցուենին իւր ծագել ,
 Հեղուն զոգւովք մեր զըւարթ
 Բզգացմունս ցարդ անընտել :
 Օ բիբս յածելով շուրջ ի խինդ՝
 Յոր նա կանխէ լուսատու ,
 Ի մէն մի տես սըրտաթինդ
 Տամբ ըզմայլմանց ալելու :
 Կենդանութեանն արդ ի սիւք
 Խայտան ոգիքս ի մեծ յոյս
 Եւ թէ դարձցին համազոյգ
 Եւ մեր վայելք՝ նորաբոյս :